



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. չորրորդ եռամսյակում /վերլուծություն/

2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 51307 գործարքներ, որոնց քանակը 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 19.9%-ով, իսկ 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 7.3%-ով:

2012թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13626 օտարման գործարքների 77.7%-ը կազմել են առուվաճառքները, 21.8%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 37.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.9%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2012թ. չորրորդ եռամսյակում, 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 10.9%-ով, իսկ 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 4.4%-ով:

2012թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 56.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. չորրորդ եռամսյակում, 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը ել է 11.1%-ով, իսկ 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 3.4%-ով:

2012թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Չորրորդ եռամսյակ 2011թ.	Չորրորդ եռամսյակ 2012թ.	Երրորդ եռամսյակ 2012թ.
Կենտրոն	438200	420300	416700
Արաբկիր	339000	348200	344200
Քանաքեռ-Զեյթուն	263800	277000	272300
Նոր-Նորք	229800	241000	234700
Ավան	243400	249000	244900
Էրեբունի	231200	242000	239300
Շենգավիթ	232500	246700	240900
Դավթաշեն	255500	267700	264800
Աջափնյակ	228800	237400	231700
Մալաթիա-Սեբաստիա	222700	233100	229800
Նուբարաշեն	142500	143500	140600
Միջինը Երևանում	257000	264200	260000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել են 1.6%-ով:

2012թ. չորրորդ եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1257 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 6.6 %-ով, իսկ 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 12.0%-ով:

2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Չորրորդ եռամսյակ 2011թ.	Չորրորդ եռամսյակ 2012թ.	Երրորդ եռամսյակ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	118300	113700	113000
	Ապարան	51900	52000	49400
	Թալին	65700	61300	61100
Արարատ	Արտաշատ	93900	94100	92600
	Մասիս	108900	112000	109400
	Վեդի	94800	98100	97100
	Արարատ	76100	74300	74100
Արմավիր	Վաղարշապատ	141400	153200	153200
	Արմավիր	114000	119100	118400
	Մեծամոր	80900	86500	86300
Գեղարքունիք	Սևան	91900	99000	99000
	Գավառ	54500	56200	53600
	Մարտունի	98200	107300	106300
	Վարդենիս	33700	40500	37400
	Ճամբարակ	25000	25000	22700
Լոռի	Վանաձոր	84100	87200	87100
	Ստեփանավան	77100	74500	74200
	Սպիտակ	101100	99800	99800
	Ալավերդի	43000	53100	51600
	Տաշիր	48900	43800	43400
	Թումանյան	13000	11000	11000
	Շամլուղ	9400	8000	8000
	Ախթալա	22300	19800	19600
Կոտայք	Աբովյան	144000	153100	153000
	Նոր Հաճն	128600	128500	128300
	Բյուրեղավան	104600	107100	107100
	Եղվարդ	112000	109300	108800
	Հրազդան	59600	61000	60100
	Ծաղկաձոր	236900	292500	292500
	Չարենցավան	77700	84000	84000
Շիրակ	Գյումրի	102600	109100	108900
	Արթիկ	63800	65000	64500
	Մարալիկ	37500	38400	37000
Սյունիք	Գորիս	119100	116000	115100
	Կապան	93900	90200	90100
	Սիսիան	83100	87200	82800
	Մեղրի	72200	73500	69700
	Ագարակ	44100	44000	43300
	Քաջարան	82200	94300	94200
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	81200	89900	86200
	Եղեգնաձոր	117500	118200	117600
	Զերմուկ	103700	107600	103500
Տավուշ	Դիլիջան	97000	108200	104700
	Իջևան	117400	116000	114000
	Բերդ	53100	55600	52000
	Նոյեմբերյան	42300	44500	42600
	Այրում	29200	27100	24800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2012թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել են 1.5%-ով:

2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1533 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 437, մարզերում միասին վերցրած՝ 1096: 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 35.8%-ով, ընդ որում, Երևանում՝ 25.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 40.3%-ով: 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 3.7%-ով, ընդ որում Երևանում՝ 21.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 2.0%-ով:

2012թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Չորրորդ եռամսյակ 2011թ.	Չորրորդ եռամսյակ 2012թ.	Երրորդ եռամսյակ 2012թ.
Կենտրոն	461700	469100	465033
Արաբկիր	370200	376200	371533
Քանաքեռ Զեյթուն	277000	288100	282200
Նորք Մարաշ	303600	313100	308600
Ավան	253400	265700	261900
Էրեբունի	230000	233200	229367
Շենգավիթ	241900	250050	246433
Դավթաշեն	264200	269100	264633
Աջափնյակ	239000	243100	240200
Մալաթիա Սեբաստիա	227900	233200	229267
Նուբարաշեն	145100	146200	144500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	274000	280600	276700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 1.4% :

2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Չորրորդ եռամսյակ 2011թ.	Չորրորդ եռամսյակ 2012թ.	Երրորդ եռամսյակ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	131200	134900	134100
	Ապարան	54700	57000	53400
	Թալին	69700	68700	68700
Արարատ	Արտաշատ	103000	98700	98400
	Մասիս	114000	113800	111700
	Վեդի	95900	100600	100200
	Արարատ	88800	87400	87300
Արմավիր	Վաղարշապատ	164000	152300	152200
	Արմավիր	116400	106500	104500
Գեղարքունիք	Սևան	94400	94200	94100
	Գավառ	50300	54600	52200
	Մարտունի	96900	94400	93400
	Վարդենիս	38400	37000	34000
	Ճամբարակ	28400	28000	26000
Լոռի	Վանաձոր	97300	98300	98100
	Ստեփանավան	79200	88100	87600
	Սպիտակ	108800	113600	113500
	Ալավերդի	40100	48100	46400
	Տաշիր	54100	51200	50500
	Թումանյան	13900	12000	12000
	Շամլուղ	11500	13200	13200
	Ախթալա	25000	29600	29500
Կոտայք	Աբովյան	152500	154700	154300
	Նոր Հաճն	132400	129800	129800
	Բյուրեղավան	109100	120000	120000
	Եղվարդ	120500	116100	115600
	Հրազդան	66600	80800	79300
	Ծաղկաձոր	308300	305000	305000
	Չարենցավան	77300	82500	82200
Շիրակի	Գյումրի	118900	117600	117300
	Արթիկ	67700	62700	61100
	Մարալիկ	39800	50400	49200
Սյունիք	Գորիս	126900	127700	127000
	Կապան	100400	98400	98300
	Սիսիան	89100	91300	89700
	Մեղրի	76000	80300	76500
	Ագարակ	47500	46500	46200
	Դաստակերտ	10300	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	82700	86700	84100
	Եղեգնաձոր	118900	115400	112800
	Ջերմուկ	116800	124900	122300
Տավուշ	Դիլիջան	103900	110000	108300
	Իջևան	129500	122000	121400
	Բերդ	57800	59000	57800
	Նոյեմբերյան	46300	46100	46100
	Այրում	34300	34600	34400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 1.1 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 4622 միավոր /3269.99 հա/ հողեր, որից Երևանում՝ 334 միավոր /41.45 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2427 միավոր /3055.08 հա/, որից Երևանում՝ 25 միավոր /3.61 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1564 միավոր /141.71 հա/, որից Երևանում՝ 199 միավոր /18.97 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 541 միավոր /38.10 հա/, որից Երևանում՝ 106 միավոր /17.65 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 48 միավոր /17.59 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /1.22 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 30 միավոր /16.38 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 12 միավոր /1.14 հա/ ընդհանուր մակերեսով:

2012թ. չորրորդ եռամսյակում օտարված հողերից 3984 միավորի /3029.18 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 263 միավոր /34.32 հա/, նվիրատվության գործարքներ՝ 600 միավորի /232.33 հա/, որից Երևանում՝ 66 միավոր /6.87 հա/ և փոխանակության գործարքներ՝ 38 միավորի /8.48 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.27 հա/:

Հանրապետությունում 2012թ. չորրորդ եռամսյակում 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.3%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 5.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 5.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 36.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 914.90 հա, որից 904.46 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.3%-ը կամ 1006 գործարքներ /482.83 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 67 միավոր /7.82 հա/, իսկ 74.0%-ը կամ 2947 միավորը /2514.83 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 194 միավոր /26.48 հա/: 2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 31 գործարք /31.52 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	27	3.30	40	4.52	14	1.24	4	1.22	127	12.67	49	11.35
Արագածոտն	93	64.25	1	0.02	6	0.08	12	1.37	296	840.20	0	0.00	77	8.47	7	0.33
Արարատ	36	66.51	4	0.18	75	6.67	62	0.94	272	178.56	1	0.74	164	14.36	17	1.45
Արմավիր	29	30.48	4	1.16	5	0.48	21	0.26	323	720.20	1	0.06	185	17.12	13	0.23
Գեղարքունիք	6	2.34	3	0.58	41	3.21	58	2.81	240	100.45	2	1.98	59	7.03	4	0.16
Լոռի	8	3.70	1	0.15	23	0.24	31	0.79	77	57.89	0	0.00	42	4.23	10	0.22
Կոտայք	79	135.23	2	3.90	71	4.70	41	1.70	281	249.68	1	0.20	228	18.37	24	1.43
Շիրակ	5	2.70	7	0.67	19	0.37	23	0.95	97	96.46	1	1.00	44	3.82	8	0.64
Սյունիք	13	101.77	5	4.33	5	0.58	4	0.53	77	91.15	0	0.00	16	1.42	3	0.26
Վայոց Ձոր	14	11.56	1	0.06	21	1.45	19	0.38	40	32.55	0	0.00	14	1.31	9	0.17
Տավուշ	14	9.36	5	0.69	24	4.36	27	1.75	43	24.58	1	0.20	55	5.41	4	0.07
Ընդամենը	297	427.90	33	11.74	317	25.44	338	16.00	1760	2392.96	11	5.40	1011	94.21	148	16.31

Ստորև ներկայացվում է 2012թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ / հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	29	3.78	0	0.00	17	2.61	12	1.17	38	4.05	0	0.00	0	0.00	10	0.69	28	3.36
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	46	32.28	27	30.81	1	0.02	6	0.08	12	1.37
Արարատ	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	175	74.28	36	66.51	4	0.18	75	6.67	60	0.92
Արմավիր	12	0.26	2	0.06	2	0.07	8	0.13	43	30.89	25	29.25	2	1.10	3	0.41	13	0.13
Գեղարքունիք	10	0.55	2	0.38	5	0.14	3	0.03	98	8.39	6	2.34	1	0.20	36	3.07	55	2.78
Լոռի	13	0.31	1	0.15	6	0.09	6	0.07	50	4.57	8	3.70	0	0.00	17	0.15	25	0.72
Կոտայք	12	4.46	1	3.66	8	0.70	3	0.10	177	140.65	75	134.81	1	0.24	63	4.00	38	1.60
Շիրակ	21	0.62	0	0.00	6	0.11	15	0.51	31	3.85	3	2.48	7	0.67	13	0.26	8	0.44
Սյունիք	7	4.44	5	4.33	2	0.11	0	0.00	18	101.07	11	100.08	0	0.00	3	0.46	4	0.53
Վայոց Ձոր	5	0.07	0	0.00	1	0.01	4	0.06	50	13.37	14	11.56	1	0.06	20	1.44	15	0.31
Տավուշ	2	0.12	0	0.00	1	0.07	1	0.05	68	16.04	14	9.36	5	0.69	23	4.29	26	1.70
Ընդամենը	113	14.62	11	8.58	48	3.91	54	2.13	794	429.44	219	390.90	22	3.16	269	21.52	284	13.86

2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 78 գործարք /37.00 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. չորրորդ եռամսյակում, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 7.7%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 36.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 5.5%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 23.7%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 13.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 7.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 22.2%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. չորրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մոտավերագույն	Միջին			Նվազագույն	Մոտավերագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	14	10.56	60.0	651.8	131.4	137	119.83	365.0	12000.0	3697.1
Ապարան	1	0.02	1733.9	1733.9	1733.9	14	8.47	86.5	2727.3	712.1
Թալին	12	20.23	38.1	38.5	38.2	114	662.00	93.6	5494.5	624.6
Ծաղկահովիտ						23	41.31	79.5	1000.0	257.2
Արարատի մարզ										
Արտաշատ	8	2.22	120.0	2047.5	888.4	124	47.25	335.1	10833.3	2762.6
Մախիս	12	9.41	67.8	334.7	177.3	55	27.86	200.0	11904.8	3168.0
Վեդի	16	54.88	16.2	1371.4	203.0	86	67.86	207.0	10795.1	1867.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	8	14.04	57.5	1042.1	332.0	182	244.33	294.3	9090.0	1491.0
Բաղրամյան	4	4.73	70.3	70.9	70.6	43	364.75	90.6	2561.1	766.0
Վաղարշապատ	13	10.47	60.5	1247.1	533.3	95	108.78	444.4	11764.7	2502.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						219	62.38	199.8	1875.0	409.1
Ճամբարակ	1	0.05	1526.0	1526.0	1526.0	3	9.82	60.5	953.3	343.4
Մարտունի	5	2.28	117.7	369.2	292.8	3	0.55	51.1	2850.0	734.9
Սևան								52.2	2134.8	318.5
Վարդենիս						15	27.70	41.2	2575.1	400.3
Լոռու մարզ										
Ալավերդի	2	0.24	896.1	903.6	900.0	7	2.95	170.4	6424.2	624.3
Գուգարք	1	0.36	212.2	212.2	212.2	9	2.52	234.6	6065.9	751.3
Սպիտակ	3	1.19	162.8	191.4	181.5	3	0.26	250.0	5555.5	732.3
Ստեփանավան	2	1.90	483.0	746.4	614.7	38	37.41	90.6	1686.6	305.3
Տաշիր						16	10.19	45.3	1384.4	149.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	48	92.96	35.9	6639.9	465.8	97	61.48	279.3	11942.7	4536.8
Եղվարդ	12	21.13	74.2	2220.8	498.3	121	168.19	174.4	11971.8	2697.7
Հրազդան	15	20.73	104.9	1000.0	358.8	62	19.36	130.5	10256.4	1778.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	0.07	120.8	120.8	120.8	24	17.94	252.0	1693.1	602.7

Ամսախա						3	11.22	40.9	261.0	128.5
Անի						56	50.20	110.6	546.9	370.7
Աշոցք						1	0.71	58.5	215.8	126.1
Արթիկ	2	2.40	140.3	6072.0	3106.1	13	16.38	79.4	1428.6	392.5
Սյունիքի մարզ										
Գորիս	3	4.74	137.5	1550.0	596.3	22	22.64	92.6	1023.2	710.2
Կապան	8	95.34	38.5	924.7	382.1	5	2.43	120.0	841.6	350.0
Մեղրի						2	0.75	193.0	3000.0	725.5
Սիսիան						48	65.33	46.3	1977.4	525.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	2.33	77.9	1375.0	344.7	25	26.96	125.0	10000.0	1893.3
Վայք	9	9.23	68.9	8505.0	3110.2	14	5.41	58.8	1430.7	620.2
Տավուշի մարզ										
Բերդ						7	1.90	213.3	3783.8	675.3
Իջևան	10	8.30	80.1	3960.0	2004.4	8	3.71	267.5	9454.5	1235.5
Նոյեմբերյան	4	1.06	718.0	2684.4	1641.8	28	18.97	46.7	7368.4	855.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. չորրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասվելագույն	Միջին			Նվազագույն	Մասվելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	724.0	922.0	3547.7	2461.4	63	61505.6	130.7	22200.0	2574.3
Ապարան	3	72.0	558.3	558.3	558.3	6	11840.0	124.1	609.6	389.1
Թային						2	4234.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						2	3400.0	60.0	214.3	87.0
Արարատի մարզ										
Արտաշատ	21	20410.9	97.6	5588.9	976.9	50	45335.6	173.9	7140.3	894.1
Մասիս	49	41325.5	118.0	3265.5	1179.5	74	55889.5	187.5	25000.0	1207.4
Վեդի	5	4998.7	158.2	1867.0	1095.4	40	42329.5	126.1	5000.0	660.8
Արմավիրի մարզ										
Արմավիր						74	77056.8	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան	2	2137.0	148.3	154.2	151.3	4	4910.0	100.0	833.3	239.1
Վաղարշապատ	1	2000.0	114.9	114.9	114.9	106	88248.3	197.4	26528.4	1526.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	232.0	258.6	258.6	258.6	13	12952.3	186.6	1084.3	667.8
Ճամբարակ	1	80.0	250.0	250.0	250.0	4	6880.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	21	24027.4	219.8	244.2	220.9	33	40106.8	119.3	5000.0	280.2
Սևան	7	6150.4	205.2	1472.1	507.4	3	1369.0	240.0	3110.4	308.8
Վարդենիս	6	216.0	600.0	600.0	600.0	5	8565.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	4	241.0	605.0	1650.0	1127.5	6	6846.0	114.3	1388.9	216.5
Գուգարք	9	1030.5	262.2	3381.0	1798.8	20	14025.9	77.9	14083.3	1144.0
Սպիտակ						11	16000.2	104.9	1348.3	205.8
Ստեփանավան						3	4390.0	88.2	1666.7	175.5
Տաշիր	4	199.0	324.6	722.0	563.4	2	1070.0	45.3	400.0	90.0

Կոտայքի մարզ										
Աբովյան	33	18387.6	641.0	5207.1	3129.0	112	80345.3	264.5	35353.5	1976.0
Եղվարդ	26	19616.9	229.2	2861.4	2330.9	86	73529.9	173.6	27000.0	2854.2
Հրազդան	4	1990.0	1267.5	3131.3	1700.3	29	28943.0	117.7	34848.5	1319.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	1684.6	262.6	3150.0	1768.2	24	16285.3	113.6	18750.0	332.4
Ամասիա						1	1450.0	45.3	274.7	71.0
Անի						12	15377.0	67.9	180.6	162.2
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ	9	906.0	253.0	5750.0	2731.2	7	5124.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	318.0	2200.0	2200.0	2200.0	4	6121.0	112.2	1700.0	367.8
Կապան	2	4305.0	110.4	110.4	110.4	2	2344.8	67.9	2638.9	300.0
Մեղրի						2	436.0	68.5	632.9	202.8
Սիսիան						7	4737.3	123.5	875.0	202.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	1860.6	750.0	766.1	758.0	9	9670.0	96.7	7659.6	500.7
Վայք	15	12582.7	244.8	1290.5	844.8	4	2485.9	120.7	1448.3	206.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	790.0	75.8	810.0	111.7
Իջևան	23	42904.9	160.0	4800.0	2760.0	47	44854.9	74.1	14423.1	518.5
Նոյեմբերյան						6	5611.0	125.0	1948.1	224.7

2012թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2612 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.1%:

2012թ. չորրորդ եռամսյակում, 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 21.0%-ով, իսկ 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 22.5%-ով:

2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 158 բնակարանների, 300 անհատական բնակելի տների, 1146 հասարակական նշանակության, 325 արտադրական նշանակության օբյեկտների, 627 միավոր /7786.17 հա/ հողերի, 3 այգետնակների և 53 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 21 վարձակալության գործարքների, այդ թվում 9 միավոր /0.60 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 5.0%-ով, իսկ 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 41.7%-ով:

2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 7786.17 հա հողերից 11.34 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 7774.83 հա հողերից 27.67 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 21.18 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 7001.10 հա, որից 6999.56 հա գյուղատնտեսական նշանակության: 2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում վարձակալվել են 7710.16 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6489 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.7%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 17.4%-ով, իսկ 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 18.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.0%/, առանձնատների /25.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.3%/ և հողերի /8.8%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3359 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 14.0%-ով, իսկ 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 0.2%-ով:

2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 836.81 հա հողեր, որից 63.13 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 80.9%-ը կամ 677.24 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 2.15 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 233.49 հա, որից 229.11 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 532 գործարքներ, որից 355-ը՝ Երևանում: 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը աճել է 21.7%-ով, ընդ որում Երևանում՝ 27.7%-ով, մարզերում միասին վերցրած՝ 11.3%-ով, իսկ 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 23.2%-ով, ընդ որում Երևանում՝ 25.6%-ով, մարզերում միասին վերցրած՝ 18.1%-ով:

2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2012թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 7409 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 24.3%-ով, իսկ 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 37.9%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.7%/:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե